

ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

ԱՐՁԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԳՐՈՒԹԻՒՆ

ՆԳԻՊՅԱՆ

Տարեկան 40 Եգ. »

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՆՄԱՆ

Տարեկան 12 Եգ.

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԲ ՕՐԵՐԸ

Ապահով բաժանորդագրութիւն չի ընդունուիր:

Ծանուցումները մտածուար պայմաններում կ'ընդունուին: Ձեռագիրները ետ չեն տրուիր:

ՑՈՐ 21

ՏԵՐՈՒՆ - ԽՄԱՐԳԻՐ ԱՂԵՆԷ ԲՈՐՈՍՍԱՆ

Արժուէայ եգիպտական կառավարութեան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԵՂՂՈՒՆՆԱՆ

ՑՈՐ 21

ՀՐԱԻՐ

«Արշալոյս»-ը ըստ հնուէն շաբաթը երկու կամ նոյն իսկ երեք անգամ հրատարակելու ձեռնարկներ պիտի ըլլան, և առ այս խորհրդակցութիւններ և բանակցութիւններ տեղի ունեցած են արդէն: Անոնք որ այսպիսի յառաջ դիմական ձեռնարկի մը փափաքող և համամիտ են և նրախապէս ու բարոյապէս օժանդակիլ կը ցանկան, կը խնդրուի որ բարեհաճին երկտողով մը իրենց հասցէն ծանուցանել «Արշալոյս»-ի ճակատը նշանակուած հասցէին:

ՇԱՐԹՈՒԱՆ ՆՕԹԵՐ

ԹՈՒՐԻՔ - ՅՈՒՆԱԿԱՆ ՍԻԶԱԴԵՊԸ

Առածի կարգ անցած է սաբացատրութիւնը թէ՛ թիւերու պահուն չէ՛ որ վէճը կը ծագի տիրապետողներուն մէջ, — դասակարգի խտրութիւն չկայ: Ըլլա՛ն ասոնք պատերազմիկներ կամ հողահարներ — այլ՝ բաժնուելու ատեն... և պատմութիւնը՝ այս կարգի շատ մը դրուագներ արձանագրած է իր սե և ճերմակ էջերուն մէջ...

Պալքանեան ընդհարումները այս արդիւնքը տուին... նման այն ձեռնարկներուն որոնք իրենց հափափած աւարը բաժնուելու ատեն կը կուռին և նոյն իսկ զերար կը խոչտանգեն ու մինչև անգամ զիրար կ'սպաննեն:

Ի սկզբանէ շորս փոքրիկները Տիւրքիոյ սաղիտէ յորջնուած միացան: Տուին ու առին, յաղթեցին ու յաղթուեցան, բայց իրականին մէջ ամենակարևոր գործողութիւնը ետքի կը մնար: Բաժանումը... որ կուռոյ խնձորը պիտի գլորէր հին սրբախորհուրդներու նոր սոսկաբէզին մէջ...

Ահաւասիկ ո՛ւր էր անհամաձայնութեան փափուկ կէտը, որ չի ուշացաւ իր բազմակիւն գլուխը ցուցադրելու Պալքանեան մարդախոյռ պայքարներուն մէջ...

Պալքանեան քառակը Եւրոպական Թուրքիայէն առիւծի յագուրդատու բաժիններ խլելէն յետոյ՝ իրեն սուր անկիւնները կորացան, ու այլ ևս անկարելի եղաւ իրենց ծրագրած հոյաչէն ամբարտակներուն անկիւնաքարերը զետեղել որոշ հիմի վրայ, ու տարակուս չ'կայ թէ՛ կառուցանելին իր նախնական քայլերուն, կամ աւելի իր սաղմային վիճակին մէջ իսկ՝ անկարելիութիւններու առջև դրուեցաւ...


Դիւանագիտական ասպարէզը՝ այս կարգի անակնկալներ շատ կը պարունակէ իր անկայուն և յարափոփոխ վազքին մէջ:

Թուրքո-Յունական նոր փոթորիկը, որ պահ մը շատ սուր կերպարանք ստացաւ, հետզհետէ նօսմայ վիճակ մը ոտանայու երեւոյթներ ցոյց կուտայ, Ռուսիոյ և Ֆրանսայի խաղաղասիրական... միջամտութիւնը կամ աւելի չիտակը ատենց լուրջ ուշադրութիւնը իր մրայ հրախրել կարողացած ըլլալուն պատճառաւ: Գէթ այս տողերը գրուելու պահուն հրատարակուած հեռագիրները այնպէս ենթադրել կուտան:

Ատոնցմէ մէկ քանիները այս տեղ զետեղելով՝ այս տողերով ըսուածներուն ստուգութիւնը հաստատելու երաշխաւորութիւնը կրնան տալ: Բայց նախ պէտք է կատարելագոյն վստահ ըլլալ հեռագիրներուն ստուգութեանը վրայ...

Ընտանեկան կեանքի մէջ շատ անգամ պատահած է որ՝ Հայրը բարկանայ իր որդւոյն, և զայն ձեռնուելու ելլէ: Միւս կողմէ մօրը պատուիրելով որ՝ միջամտէ նախատեսուած ձեռք արգիլելու համար ու երբ տղան ձեռնուելու մախանքէն կ'ազատի, հայրն ալ երկու խօսքի մէջ իր գոհունակութիւնը կը փնտռէ, հետեւելով յայտարարելով իր տղուն թէ՛ «Եթէ Մայրդ իմ ձեռքէս չի բռնէր... լաւ ձեռք մը պիտի քաշէր...»

Հիմակու հիմայ մենք այդ տղաքներու յաճախանքին մէջ մանք, մինչև որ հայրերն ու մայրերը իրենց վերջնական համաձայնութիւնը գոյացնեն...



ՄԻՐՏԻԶ ԻՅ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ Հ. Բ. Ը. ՄԻՐՏԻԶԵԱՆ ԶԻՂՆ ՈՒ ՀՈԳԻՆ. - ԱՄԱՐՂՁՈՒԹԻՒՆԸ

Բայց օրուան հեռագիրները չի մոռնանք, զանոնք ընտանեկան ներքին պազշտ համաձայնութիւններու գերագոյն հեշտանքին զոհելով...

Թրքո-Յունական վերջին անհամաձայնութիւններուն առթիւ, Լոնտոնէն 16 Յունիս թուականաւ հետեւելով կը հեռագրեն: Կը տեսնէք որ՝ հեռագիրներուն կրթնելով միայն քանի մը խօսք ընելու պիտի կրնանք համարձակիլ...

Մովային գերակայութիւնը կը ըսէ հեռագիրը, Յունո-Թրքական միջադէպին մէջ ամենէն կարևոր մեկնակէտը համարուած է տէրութեանց շատերուն: Երբ Պատերազմը յայտարարուի, ասոնք պիտի ստիպուին անփշական արգելք դնել, էլ վիճակէն և Պարսկէն Թուրքիոյ նոր գնած նաւերուն անցքին վրայ: (Մ. Խ. Իրա՛ւ որ Թուրքիա նաւեր գնէր է...) Կը կարծուի նաև թէ՛ երկու Տէրութիւններուն արգի նիւթական անձկութիւնը արգելք պիտի ըլլայ զէնքի դիմելու:

Միւս կողմէ, «Միութիւն և Յառաջդիմութիւն» Գոմիթէին օրկանը, Թամիլի, կ'ըսէ թէ՛ եթէ Յունաստան գերագրգուռի իսկ, Թուրքիա անյողողող պիտի մնայ: Սերպիա՝ Յունաստանի հետ դաշնագիր մը կնքած է, որուն զօրութեամբ պարտաւոր է իր բանակները ի նպաստ Յոյներուն շարժման մէջ դնել պատերազմ ծագելու պարագային: Բայց Սերպ Խորհրդարանը՝ կացութիւնները ինկատի ունենալով ինքզինքը կապահովէ թէ՛ մեծ տէրութիւնները ամէն ջանք պիտի ընեն խաղաղութիւնը պահպանելու համար: Կ'ըսէ Պէլլրատէն ստացուած հեռագիր մը:

Այսպէս ըլլալուն հաւաստիքներէն մէկն ալ այն է որ Ռուսիա և Ֆրանսա իրենց նաւերը Չիւսուիոյ առջև կը տեղադրեն, պատահականութիւնները կանխելու համար: Իսկ ներքին Գործոց նախարար Թալէաթ պէյը, բաւական լուրջ հաւաստիքներ կուտայ իր շրջած ասիական նահանգներուն մէջ խաղաղութիւնը պահպանելու համար գործադրած միջոցներով:

ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲԱՐԻ

ՊԵՐՁՍԿ ԳՐԱՆՍՅ ՍԵ ԿԱՆՍՅ
ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ, ՍԱՆ ԺՈՂԵՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մախոր, առագ եւ երաշխատուի եւ մեր պատասխանով ՔՕՍ ԹԻԻՄ-
ՆԵՐԸ ամեն անուն կամար, որով կուգեն շաշախատու հազարանուն ու-
նենայ, Չախատու գ, ներով .

Եթէ Տէրութեանց նիւթական
հաշիւները թոյլատրէին, մինչև
ցարդ արդէն քանի մը կարևոր ընդ-
հարուսներու լուրեր պիտի հասնէին
մեզի, եւ այսպիսի ընդհարուսներէ
նոյն իսկ կարելի էր օգտուիլ քո-
վընտի միջոցներով, եթէ գաղա-
փարին հետ պատրաստականութեանը
միանար . . .

ԳԻՍԱԽՈՐ

ՎԱՐԺՈՒՀԻ ԿՈՒՋՈՒԻ

Պատուաւոր ընտանիքի մը երկու
փոքրիկները դաստիարակելու հա-
մար վարժուհիի մը պէտքը կայ .

Գոհացուցիչ ամսական .

Դիմել Արշալոյս Ի Տնօրինու-
թեան .

ԴԵՂՆԱԾ ԹՈՒՂԹԵՐ

ԳՍՅԸ ԵՒ ՄԱՔԻ

(Շարունակութիւն Նախորդ քիւն)

«Սրբ քու պատկանելի ծնողքը՝
ամօթահար եւ սրտաթուզը՝ պարահան-
դէսէն մեկնեցան, քեզ աւելի զբողոքե-
լով ախրութիւնդ փարատելու համար,
ուզեցի բարեկամութիւններէս մի քանին
մեր խցիկը բերել, Դժբաղդարար ար-
հեստակիրցներէս շատեր չ'ուզեցին ձեռքէ
փախցնել իրենց այն պատահական գա-
վաղիկները, որոնք տարին տասներկու
ամիս, գիշեր ցերեկ, ականջին տնկած
կ'ապաստեն ասանկ բարեպատե՛ թաթի
գործի մը, որպէսզի կարող ըլլան ամե-
նայն ազատութեամբ եւ սրտի կատար-
եալ անդորրութեամբ տեսակցել եւ զը-
ուարձանալ իմ սեռակեցնեղէս առնց
հեռ, զորոնք արդէն կը ճանչնան կամ
այն գիշեր պատահարաբար ձեռքի տակ
կ'ուենան .

Հետեւաբար ունայնաձեռն ետ կը
դառնայի քու քովդ, երբ՝ դուռը գոց
վերջին սենեակին կղպանքին ծակէն
նայելով տեսայ Արուսեակը, որ երեսին
ներկը կը նորոգէր, առաջին ձեռքը ան-
հետացած ըլլալով ինչ ինչ պատճառ-
ներով, Բազմոցին վրայ երկնցսի էր
մարդ մը, որ անշարժ կ'երեւէր .

«Առանց վարանելու դուռը զարկի
եւ բերանս կղպանքին ծակին դնելով .
« — Ես եմ, Արուսեակ, բաց
փսփսացի .

«Բարեկամուհիս անմիջապէս բա-
ցաւ, ներս մտայ .

« — Անվախ խօսէ՛, չան պէս գի-
նով է, ըսաւ Արուսեակ՝ պառկած մարդը
ցուցնելով .

«Կնոջական հետաքրքրութիւնը ա-
ռածի կարգ անցած է . բայց իմ դասա-
կիրցներուս հետաքրքրութեանը բերա-
պատիկ աւելի է . Պատկողին մտեցայ,
երկտասարդութիւնը կոչուած տարիքը
չատոնց անցուցած մարդ մ'էր, որուն
չուրթներուն վրայ կարմիր եւ ճերմակ
եւ կապոյտ եւ կանանչ խաւ մը կար,
զոր Արուսեակին ցուցուցի՝ խնդալով .

« — Անչա՛ մարդ, ըսաւ բարեկա-
մուհիս, եւ երկուքնիս ալ խնդացին . .
« — Կը ճանչնաս՞ զինքը, հար-
ցուցի .

« — Հապա, ըրաւ Արուսեակ . ա-
մուսնացած է, երկու հատ ալ չափահաս
ազնիկ ունի .

«Այն ատեն մեր դէպքը պատմեցի,
երգուընցնելով զինքը որ մարդու բերան
չբանայ, եւ առաջարկեցի հետս քու քո-
վըդ գալ .

«Արուսեակ գալարուելով խնդալէ
հեղք .

« — Լաւ, բայց աս ստակելիքը ի՞նչ
պիտի ընենք, ըսաւ մարդուն համար .

« — Դուն անոր հոգը պարահանդէ-
սին հոգարարուեցուն թո՛ղ ըսի, գի-
նովները սթափեցնել եւ զանոնք տուներ-
նին հասցնել իրենց պարտականութիւ-
նը պէտք է ըլլայ, քանի որ մոլորա-
կասիրաց Ընկերութեան նպատակը մո-
լորեալներուն առաջնորդել եւ մարդկու-
թեան օգտակար ըլլալ է .

« Արուսեակ համոզուեցաւ, բայց
սենեակէն չ'ելած մարդուն գրպանները
պարպելով իր գրպանները լեցուց .

« — Ի՞նչ կ'ընես, ըսի .

« — Իմ արհեստս, պատասխանեց
բարեկամուհիս, թո՛ղ ընկերութիւնը
տուժէ .

Վերջապէս եկանք եւ քեզ գտանք
Մ'նացածը անշուշտ մոռցած չ'ես .

« Երկու օր ետքը Արուսեակ տունս
եկաւ . բնականաբար քու վրատ խօսե-
ցանք . Արժանիքիդ փայլն աւելցնելու
համար բարեկամուհիս ցուցուցի այն
զոյգ մը մարգարտեայ օղբ եւ աղաման-
դազարդ ապարանջանը, զորոնք ինծի
նուիրեցիր Մ'նուդին, եւ որոնք շա-
տերուն աչքերը շլացուցած, եւ մաս
խածնել տուած են, Չ'մոռնամ նաեւ
յիշել պարբերական առատաձեռնու-
թիւնդ, որուն շնորհիւ շաշախատու
կ'ապրէի .

« Հիմա զանք վերջին անգամին բա-
ցատրութեան .

« Կը տեսնեմ սիրականս, որ այ-
ցելութիւնները հետզհետէ ցանցառ կըլ-
լան . եւ կ'ըզզամ թէ ա՛լ միեւնոյն
հաճոյքը չես գտներ իմ քովս . Ասկէ կը
հետեւեցնեմ որ օտար ազդեցութեան մը
կը հնազանդիս կամ նոր սիրոյ մը կը հը-
պատակիս, եւ կը նախատեսեմ այն օրը
որ ինծի պիտի ըսես .

« Պաշտելի Աղաւնի՛ս, դիմե՛ք տա-
րիէ մը ի վեր միատեղ ապրեցանք ա-
ռանց կուռելու, առանց շշուկի . բան
մը զոր էրիկ կ'իտի մէջ անգամ գտնել
գտուար է՝ այս դարավերջիկ տարինե-
րուն մէջ, Բաւական սեպտեմբեր մեր այս
քաջազորութիւնը, որոշեցի դարձեալ
ազատ ըլլալ, եւ քու ազատութիւնդ
քեզի դարձնել . » (Մ . Խ . - Ի՞նչ մեծ
շնորհք . Աստուած իմ . . .)

« Արդ, Տիգրանիկս՝ ինծի պէս կի-
նեքը միակուսութեան կը ստկան
Այս պատճառաւ եւ ապագան նախատե-
սելով . քեզի յաջորդ մը պատրաստած
էի արդէն, Յիշեալ յաջորդը՝ որ քեզմէ
աւելի հարուստ է՝ ինծի կ'առաջարկէ
Եզրկատու անցընել այս ձեռքը .

« Երկու օրէն պիտի մեկնինք
Աւրստիական շրջանաւով . Ուստի
կուգամ ներկայիս քեզի « Մնաս Բար-
հաւ » ըսելու .

« Բարեկամուհիդ
« ԱՂԱԻՆԻ »

« Յ . Գ . Թէպէտ մտածեցի քեզի
դարձնել օղբն ու ապարանջանը . բայց
չաւ գիտնալով որ պիտի սրտնեղիս եւ
գանտը ինծի պիտի վերագործնես քա-
նի մը ծանր խօսքերով, չ'ուզեցի քեզի
ձանձորոյթ եւ զայրոյթ պատճառել .

« ՆՈՅ »

2 .

Տիգրան Անկարեան, Բերս՝ տան
մը մէջ՝ բնակարան մը վարձած էր, որ
ունէր սալօն մը, ննջասենեակ մը եւ
ճաշարան մը . Հոն, իր Գառնիկ եւ
Վահէ մտերմիկներուն ներկայութեան
ստացաւ Աղաւնիին սիրագիրը՝ բուրբու-
նալի պահարանի մը մէջ .

Վաճակին ինքն իրեն ընթերցումն
աւարտելէն ետքը, ահագին քրքիչ մը
ձգեց, որուն իսկոյն ընկերակցեցան իր
բարեկամները առանց այս յանկարծակի
ուրախութեան պատճառը գիտնալու .
Բայց որովհետեւ Տիգրանին չ'սակին
պէտք ունէին ստէպ, բրածնին ճշգրտէս
գիտնապիտական նրբամտութիւն մ'էր .

Երբ քիչ մը հանդարտեցան եւ աչ-
քերնին սրեցին, Տիգրան ըսաւ .

— Գիտէ՞ք, պարոններ, ի՞նչու
ասանկ խենդի պէս ինդացի .

— Ա՛հ, ա՛հ, — ըրաւ Գառնիկ,
դարձեալ քանքանելու միտում ցուցնելով .

— անպատճառ ճաթելու բան մը կայ .
— Անշուշտ առանց պատճառի չ'էր,
ըսաւ Վահէ գրպանէն թաշկինակը հա-
նելով .

— Մտիկ ըրէ՞ք որ հասկնաք, ըսաւ
Տիգրան, Աղաւնին, իմ Աղաւնիս կը
ճանչնաք, այնպէս չ'է՞ .

— Անմասն Աղաւնին, հարկաւ կը
ճանչնամ, ըսաւ Վահէ .

— Գեղեցկութեան թագուհի՛ Ա-
ղաւնին . զայն չճանչցող կայ . ես շատ
աղէկ գիտեմ որ այն մէկ հատիկին հա-
մար բոլոր աշխարհ վրայ կը նախանձի,
չարայարեց Գառնիկ .

— Այո՛ — ըսաւ Տիգրան յոխոր-
տալով — լուր ունիմ որ շատեր, նոյն
իսկ ամենէն հարուստները, ուզեցին
զայն ձեռքէս խլել, բայց մէկ կողմէն
իր հաւատարմութիւնը, միւս կողմէն
իմ վրաս ունեցած սէրը ամեն սոռա-
ջարկութիւններուն յաղթեցին .

— Խելացի աղջիկ մ'է եղեր, ըսաւ
Տիգրան .

— Մեծ յիմարութիւն ըրած կ'ըլլար
ուրիշ մը քեզի փոխանակելով, աւար-
տեց Վահէ .

— Բայց ա՛ն փոխանակուեցայ,
ըսաւ Տիգրան .

— Ի՞նչ կ'ըսես .

— Ի՞նչ կը լսեմ .

— Ատի անհաւատալի է .

— Կատակ կ'ընես .

— Այն անձը զոր Աղաւնին քեզի
նախաբանեց այս աշխարհէն ըլլալու չ'է .

— Երկրիս վրայ չկայ արարած մը
որ քու արժանիքիդ կէսն ունենայ .

— Կամ թէ՛ ճիշտն ըսելով՝ ես Ա-
ղաւնին կը ձգեմ ուրիշ մը համար,
ըսաւ Տիգրան .

— Ստիկ ըսէ՛, պատասխանեց Վահէ .

— Ատ կը հասկնամ, յարեց Գառնիկ .

— Այ իրմէն զղուեցայ, ըսաւ Տիգ-
րան .

— Կարծես՞ թէ ի՞նչ մը ծուռ կը
քալէ, ըրաւ Վահէ .

— Ձեռքերը մեծակ հոն, շարունա-
կեց Գառնիկ .

— Ոտերուն ձեռք ա՛ր սակ մ'է .

— Քիթին ծայրը ա՛ սիւս յի պէս է .

— Կարծես՞ իսաւպարտ ալ ունի .

— Վրան գեղեցկութիւն մը չ'եմ
տեսներ .

— Քեզի արժանի քարեկանութիւն
մը չ'է .

— Հարկաւ այս ատեն ճշմարտու-
թիւնները երեսին զարկիր, ըսաւ Գառ-
նիկ .

— Անտարակոյս, յաւել Վահէ, եւ
անշուշտ երեսն ալ գրեցիր որ ա՛լ չհա-
մարձակի քու անունդ յիշելու .

— Ահա հոս կը սխալիք, պատաս-
խանեց Տիգրան, ես եմ որ զինք կը
ձգեմ բայց սկզբնաւորութիւնը իրմէն
է, կը հասկնա՞ք .

Երկու անկեղծները չհասկցան .
բայց վախնալով որ Տիգրանին անը-
պատ խօսք մը կը փախցնեն, տուին
անորոշ պատասխաններ, որոնք որ եւ
է կերպով չ'էին կրնար զիրենք պատաս-
խանատուութեան տակ ձգել .

Երբ քիչ մը հանդարտեցան եւ աչ-
քերնին սրեցին, Տիգրան ըսաւ .

Շտուակալի

Ա . ՊԱԼԵԱՆ

ԴԱՏԱՐԿ

Ամառ գիշերով
Տխուր յուշերով,
Հէգ սիրտս է սառեր
Մածկած փուշերով .

Դատարկ է չորս դիս,
Կը սոսկայ հոգիս
Մեռիկ մենաւոր,
Կեանքէն հեռաւոր .

Անկիւնի միակ
Սարդը ոստայնակ,
Բազդակից ընկեր,
Սոր քուն է ինկեր .

Աստղերն անհամար,
Նայուածքով տխմար,
Ինծի կը գիտեն
Իրենց երկինքէն .

Ու բիւր գաղափար
Ալքերու նման,
Չիս քեն դար վար
Աշխարհ մը օտար .

Սմառ գիշերով,
Տխուր յուշերով,
Հէգ սիրտս է սառեր
Մածկած փուշերով .

(Եզրագոյն)

ԱՆՍԱԼՈՒԹ

ՄԵՐ ԼԵՁՈՒՆ

Եզրագոյնայ գաղութին մեծամաս-
նութիւնը թրքախօսներէ կը բաղկանայ .
Աստից մէջ են կիսարացիք, Ատա-
նացիք եւ շատ մ'ալ Պօլսեցիներ .
Նորահաս սերունդէն կը յուսացուի
որ, մեր Մայրենի լեզուին դէմ եղած
այս անարգանքը դարմանելու հոգածու-
թիւնը ունենայ .

Հայ լեզուին դէմ գոյութիւն ունե-
ցող այս արգահատելի անտարբերու-
թիւնը, ամենէն զիտաւոր պատճառներէն
մէկն է որ մեր ազգայինները ուժանան
մեր ազգային կեանքին մէջ շարժում ու
կենդանութիւն յառաջ բերող բոլոր լա-
ւազոյն ձեռնարկներէն .

Մեր Պօլսեցի բարեկամներէն շա-
տերը մանաւանդ՝ այս աններելի յան-
ցանքին մէջ չափազանց յառաջ գնացած
են, այնպէս որ բոլորովին այլասեռուծի
լարիւրիդորին մէջ մոլորածներ են եւ
քիչ բացառութեամբ նոյն իսկ կանգի-
տտանան հայրենիքի մը գոյութիւնը,
ազգակիրցներու կարօտը, ու աստիցմով
գրեթէ չզբաղիր իրենց թմբած միտքը .

Ըսէ՛ք, ով հայագէտ բայց թրքա-
խօս ազգայիններս Ձեզմէ ո՞ր մէկը
բանակալութեան շղթաներուն ներքեւ
չի տառապեցաւ, ո՞ր մէկը — գաւառացի
թէ Պօլսեցի — բարբարոս խուժաններու
անարգ խոշտանգութիւններուն չ'ենթար-
կուեցաւ, ըսէ՛ք թէ՛ որ մէկը ամբիւնով
ու տարիներով զնտաններու մէջ չի
պարփակուեցաւ զրկուելով ընտանեկան
եւ ընկերային սիրելի կենցաղէն .

Մեր բազմաթիւ նահատակ եղբայր-
ներուն արիւնները վրեժ կը դրչեն իրենց

ԱՇԽԱՏԱՆՈՑ

ԱՊՈՒԵՏՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹՈՑԻՒՄ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Օրհնայի Հրատարակիչ Վրայ, Բրիտանացի Պատիւի ղեկավար:

Փորագրութեան արժեքները ընդհանուր մասնագիտութեան կը կիրարկուին մեր աշխատանոցին մէջ՝ կատարելով ճշգրտագոյն թիւեր: Առեւտրական գրասենյակներու յատուկ ալիքան միջոցներ ինչպէս՝ Duplex, պիւնկոնոքոն պղինձէ եւ քարտէզէ քիւմպրեք քորթ քիւմպրեք եւ այլ որոնք մեր տրամագրութեան տակ կը գտնուին դիւրամատչելի գներով:

Impression en Relief

խուլ գերեզմաններէն. սակայն այս անգամ ոչինչ կազմեց մեր վրայ եւ մենք կը յարատեւենք մեր ազգը, մեր լեզուէն արհամարհելու մտայնութեանը մէջ:

Գոնէ չենք հետեւի մեր դրացի յոյներուն. ասոնցմէ հազիւ հազ կարելի է գտնել մէկը՝ որ օրուան լրագիրը չի կարդայ, ինչ որ ալ ըլլայ այն: Իսկ մեզմէ շատերը տարիներով թերթի կտոր մը ձեռքերնին չեն առներ: Ազգասիրտ կան բժանդրութիւնը մեր մէջ իր ուրոյն տեղը բռնած չէ եւ Եգիպտոսի օտար գաղութներէն մեծամասնութիւնը մեզ առանձին ազգ մը չի ճանչնար, այլ բոլորովին թրքութեան մէջ կազմալուծուած տարր մը կը կարծէ:

Ազգային յատկութեան ազգակները, ազգային սրտն, ակումբներ եւ այլն ոչինչ կ'արժեն այս զասակարգին համար. քանի որ ասոնք անձնական չափ մը չեն արտադրել իրենց եւ միայն հանրային շահերը կը խօսին այդպիսի վայրերու մէջ:

Արդարեւ սա անկեղծ գաղափարը առ հասարակ արմատ բռնած է մեր մէջ թէ՛ փափաքելի է որ Հայաստանը բարեկուրտ թէ՛ աւտրառութեանց վերջ մը դրուի, թէ՛ հայ արհեստագործ գեղջուկը, կամ գործաւորը յափշտակիչ վազրերու սարսփէն զերծ ըլլան, ազատութիւնն ու հասարակութիւնը տիրապետէ, բայց ամենէն խոշոր ու կարեւոր կէտը կը մոռնանք: այն է՝ մեր ազգը սիրելի մեր լեզուին գերակշռութիւն տալ ամենուրեք եւ ամէն պարագայի մէջ:

Ովքեր պիտի ըլլան Հայաստանի բարեկարգումները: Կարելի է յուսալ որ անկեղծ յոյսեր մեզի համար պատարաստ Հայաստան մը կամ երջանկութեան զբախտ մը պատրաստեն. ու մենք «հազըր օղան պապասի» պէս զայն վայելենք, առանց մեր կողմէ թեթեւ ջանքեր ընելու:

Ինչ կ'արեւի է սպասել փի մը անձնուրացներէ կամ խմբակներէ, քանի որ անդին մեծամասնութիւն մը իբր հայ անհատ՝ ո՛ր եւ է ազգագործ զգացում սնունդանելէ շատ հեռի կ'ապրի:

Իսկ ասոնք մեր գիտակից գասակարգը, մինչեւ ցարդ լեզուի հարցով գրեթէ ընաւ հետաքրքրուած չունին, եւ կարծես անաւարտ մը ունին իր շրջաններէն ծայրը:

Սակայն նկատելու ենք որ օրուան օրէ մտազուտութեան մէջ կը միտնուինք ասանց զգալու: Ալ ժամանակը հասած չէ՛ որ աւելի չըջանայ յետեւի մեր շարժիքը ու գործնք...:

Գահիրէ Ա. ՍԱԳԻՍԵԱՆ
Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.
ՀԱՐՁՈՒՄՆԵՐԻՆ
Գալստեան վարժարանի հարցաքննութիւնները սկսած են եղեր, աստի անտի մեր ստացած տեղեկութիւններուն նայելով:

պահ Գեր, Տէր Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, ուշի ուշով կը հետեւի քննութիւններուն, և անշուշտ իր կազմած գաղափարը օգտակար պիտի դարձնէ ազգային մանկուոյն, որ յառաջիկայ յրջաններուն աւելի՛ կարենայ օգտուել թափուած ջանքերէն և ծախսուած մեծագումար դրամներէն:

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀՍԳԷՍ
Մանկավարժան Ուսումնարանի Տնօրէնութեան ստացուած հրատարակութիւնը կը տեղեկանանք թէ՛ վաղը կէս օրէն յետոյ, ժամը ճիշտ է ու կէսին Բրէնթանիա թատրոնին մէջ տեղի պիտի ունենայ մրցանակաբաշխութեան հանդէսը Մանկավարժամբ Առաջնորդական Տեղապահ Գեր. Տէր Թորգոմ Եպիսկոպոսի և Գահիրէի Յարսակեան Հիւպատոս Պարոն Պոնզօնի:

Ինչպէս ամէն տարի, տարակարգ չկայ որ այս տարի ևս Մանկավարժան Ուսումնարանի աշակերտներն հանգիստ գիտելիքներուն հիացումը պիտի գրաւեն: Եկէ՛ք և տեսէք:

ՏԻՐՈՒՆԻ
Անցեալ օր Տիրա Փիլիպպոս Թիւրպօֆ դժբաղդութիւնն ունեցաւ իր հնգամեայ Արայ անունով զաւակը հողին յանձնելու, կարծատե հիւանդութիւնէ մը յետոյ: Երկնային մխիթարութիւն կը հայցենք որդեկորոյս հօրը և թիւրպօֆ ընտանիքին:

ԳՈՐԻՓ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ
Տիրա Արմենակ Պալճեանի շաքարեղէնի աշխատանոցին համար պաշտօնեալի մը պէտքը կայ, դիմել իր գործատեղին, Շարա Գլօտ Պէյ:

Քիչ գործազուրկով յարմար զբաղում մը ունենալ փափաքողները, կընան դիմել Պազար - Մուրուր թիւ 19 Վասպուրական ճաշարան-Սրճարանը, Տիրա Աւետիս Պոյճեանին:

Օրական մէկ սկի շահ ապահովող գործ մը կայ, որուն տէրը արդէն ուրիշ ծանր զբաղումներ ունենալուն պատճառաւ կուզէ որ թիշ մը վաճառել զայն: Գնորդը իրաւունք պիտի ունենայ մէկ ամիս գործը սերտել և ըսուածները հաստատելէ յետոյ սակարկուած դրամը վճարել:

Դիմել թերթի Տնօրէնութեան:

ՏԵՂԱԿԱՆ

ԿՆՈՋ ՄԱՏ ԿԱՅ...
Անցեալ օր՝ Սայիտա Չէյնապի մէկիթին մօտերը, ուր Մեկուրի պատճառաւ անհամար բազմութիւն հաւաքուած կրկայ, արիւնալի կը սիւ մը տեղի ունեցած է տեղացիներու մէջ, և դանակներն ու նապուրները ահագին դեր խաղացած են, ծանրապէս վիրաւորելով 20 ի չափ հոգիներ՝ մէջը ըլլալով երկու կիներ ալ:
Ոստիկանութիւնը մեծ գոռաբուրեմամբ կրցած է խաղաղեցնել այս հարիւրէ աւելի թուով կատաղի պատերազմիկները, և վիրաւորները

հաւաքելով հարցաքննութեան ենթարկած է, ուրիշ հասկացած է թէ՛ այդ սոսկալի կռիւն շարժառիթ տուած են երկու կիները, որոնք մէկ քանի տեղերէ վիրաւորուած են ընդհարումին մէջ:
«Կնոջ մատը» սակէ զատ գեոինչե՛ր կարող չէ գործելու...:

ԳՈՂՈՒԹԻՒՆ
Հակառակ ոստիկանական խըստութեանց, օր չանցնիր որ մէկ քանի ճարպիկ գողութիւններ չ'արձանագրեն տեղական թերթերը:
Այս անգամ Ապտինի ոստիկանատան մօտերը գտնուող սեղանաւորի մը խանութն է որ այցելութիւնը ընդունած է գողերու, որոնք երեք գեշերուան աշխատութիւն կատարելով խրամատ մը բացած և իրենց անհաճոյ արհեստը ի գործ դրած են առանց ո՛ր է արգելքի հանդիպելու:

Ուրիշ կօշկակար մ'ալ դարձեալ Ապտինի մէջ, կէս դիշերին մօտերը երբ իր տունը կը վերադառնայ, դէմ դիմաց կը գտնուի գողը մը, որ ժողուրդուրով զբաղած է:

Կօշկակարը իր պատուական հիւրին մեծարանք մը ըրած ըլլալու համար կը փաթառի անոր և ճրգնաժամային պայքարը կ'սկսի...:

Փոխադարձաբար զիրար վիրաւորելէ յետոյ, տան տէրը վերջապէս կը ալոզի իր այցելուն մինչև ստիկանատուն տանիլ:

ՅՕՐՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՏԵ ԷԼ ԵՆԷՏԷՑԵ
Փալաքիի վաճառատան դիմաց
Քարթ Բօստալ Հուսանկարներուն
տուգինան 10 զրուչէն:
Ե Ա Պ Է Լ Է Ծ

ՀԵՌԱԳԻՐ

Լոնտոն 16 Յունիս. - Յոյն կուսակառուցիչը պէ՛տք էր ևրաւ հասկանալ իր Մարտի և արաքիւն ևրաւ մեկնելու պատճառս զսնտելու համար: (Մ. Խ. Երոպական միջամտութիւնը Յունական այս մանթարները ջուրը ձգեց...)

մը յանգելու համար:
Արեւի 18 Յունիս. - Տարսաւեչի և Զմիւռնիոյ մէջ պաշարման վիճակ հռչակուեցաւ:
Արեւի 18 Յունիս. - Տարսաւեչի և Այվազըի կառավարիչները պաշտօնակ եղան:

Լոնտոն 18 Յունիս. - Թայլըի Կ. Պօլսոյ թղթակիցը հետագրաւ կը ծանուցանէ թէ՛ թուրք կառավարութիւնը պէ՛տք էր ևրաւ միջոցները ձեռք առաւ, Տարսաւեչի Յոյները պաշտպանելու համար: Այս վերջինները հունձները հաւաքելով զբաղած են բայց թուրքերը կասաղութեանը կը ընդհանուր անունը աշխատութիւնները:

Լոնտոն 18 Յունիս. - Արևսքոնկի և Երասաւեչի մեծ փոքր ջանութեանը գիշեր զերեկ կաշխատեցին, Թուրքիոյ յանձնարարած գրահաւորները աւարտելով, աւելանկարձ ժամանակակիցի մէջ յանձնելու համար:

Կ. Պօլսո 18 Յունիս. - Արևսքոն 12 ին Յոյն կառավարութեան կողմէ տրուած ևօրային Բ. Իուրք սակարկի պատճառաւ յի, բայց կ'ապաստուի որ Հիւզարթի երեկոյ (երեկ յետոյ օրը) տրուած ըլլայ այն:

Լոնտոն 18 Յունիս. - Բ. Իուրք ծանուցաւր մը դրեց իր Կ. Պօլսոյ դեսպաններուն, որուն մէջ կը գտնուէր Երոպայի մէջ տարածուած այն սոս րոտերուն դէմ, որպէս թէ թուրքիոյ կացութիւնը վատարաւացած և յոյներն ալ հաշտուանքի գոնէր եղած են: Բ. Իուրք կ'ապահովուէ թէ՛ կաշարութեան մէջ կասարեշայէս վերահաստատուած է կարգապահութիւնը և ևրաւեր կը կարդայ Երոպական Տերութիւններուն պատճառաւ որիկէ, սեղուցն վրայ ստուգելու համար այդպիսի տարածուած թիւներու անքստութիւնը:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ ՈՒ Փ

Գահիրէ Տ. Կ. Գ. - Բարեկամ, մեր մեր տեսնուած մարդկաններուն համար կանխաւ մէկէ մը արտօնութիւն անհելու պէտք չունինք եւ մանաւանդ օրէնքէ դուրս ո՛ր է մեկն ալ համարառու չենք ընդունիր մեր վրայ:
Սա՛ ալ պէտք է գիտնալ թէ՛ լըրագրական ասպարիզին մէջ ապրող մարդը, քանակայէ մը աւելի իրաւունք ունի ժողովուրդին ամէն զասակարգերուն հետ չիւրձ ունենալու: Ան կրնայ ազատ բայց պատուաւոր մուտք ունենալ հարուստին պալատը աղքատին խրճիթը եւ ամենուրեք, ուր որ իր պաշտօնը կը կանչէ զինքը: Այսչափ բացատրութիւն բաւական համարեցէք:

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ԳԱՎԱԲԻ ՓՈՂՈՑ ՆԱԻԿԻՆ ՓԱՄԲԱԼ

Վ. Ա. ՃԱՆՈՒԱՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵՒ ՓՈՒՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՈՍ ԵՆ ՓՈՒՔԱՑԷՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Գոլոբայ ամենամեծն թիֆլիսի Տան Գահիրէի նորահաստատ Մանսափիւն է .

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ԱՂԵՔԱՆԴՐԻՍ. (Եղիպտոս)

Շարժական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ Նահանգներու , Գա. նատայի եւ Հարաւային Ամերիկայի համար .

Գաղթականներու համար չափաւոր գին .

Աչքի քննութիւնը ճշիւաբար կը կատարուի տեղւոյս մէջ ,

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել Գործակալութեան .

ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ - ԼԵՆՕՓՕ

Փոստարկի թիւ 827

Թուրքիոյ գաւառներու մէջ

Փոխ - գործակալներ կը փնտռուին

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱԿՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

248 դ թիւով .

Գահիրէ, 14 Յունիս 1914

Առաջին պարզեւ

Թիւ	10988	Ղրջ .	Ողջ	4000
"	10806	"	"	400
"	8384	"	"	200
"	7487	"	"	100
"	5256	"	"	"
"	5641	"	"	"
"	300	"	"	"
"	7547	"	"	"
"	3133	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70 անգամ շահը :

79 195 519 1738 1979 2005 2032
2508 2564 3244 4054 4513 4880
4946 6865 7756 7804 8253 8397
8904 9042 9301 9417 9910 10646
10664 11260 11442 11474 11485
11743 11939 12193 12217 13066
13263 13355 13365 14236 14731


ՓՈՐԱԳՐԻՉ

Ա. ՍԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնթանէս Աշի Փողոցին վրայ ՇԱՐՄ ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE SINGER MANUFACTURING Co



Շարժ-էլ-Մորապի Տափիղ Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԵՐԻՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :

400 Կ աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌՔԶԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախդիսին մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե . Ք . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր 'եքենայի վրայ ՍԻՆԵՐԻ ներկայ յատկանշիւն

Գին ՉԱՓ . . .

ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ ՈՒՆԻ

Ձրի դասեր և նորոգուած թիւներ , յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանը դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՃԱՇԱՐԱՆ ՎՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՉԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատրաստուին Եւրոպական եւ Արեւելեան ընտիր կերակուրներ . պանդուխտ երիտասարդները եթէ անգամ մը այցելեն մեծապէս գոհ պիտի մնան մատչելի դիներէն և սպասակութենէն . 14

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ն

« Արշալոյս » ի ամբողջ Ռուսա. նիոյ գործակալութիւնը ստանձնած է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն պէտք է զիմեւ թերթին վերաբերեալ ամէն գործերու համար . Մեր գործակալին հասցէն է ,

Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբկիբի գործակալն է Տիար Միսաք Ա. Սուրեան , որուն պէտք է զիմեւ թերթին վերաբերեալ բոլոր գործերու համար .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարժ Ապտ էլ Ալիզ Ապտիի Գարագոլին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւ մը լինելու համար զանազան տեղեր դիմած ու դժգոհ մնացած են , թող անշամ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւորուիլ որ եթէ իրենց յանձնարարութիւնը նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը ամբողջովին հետ պիտի ստանան :

Այս պայմանը ճաշակաւոր հագուելու փոփոքողներուն համար , նը պատատւոր առիթ մը պիտի ըլլայ : Ապտիկ ապագրանքները նկատուողութեան շին առուի , եւ անոնք որ ինծի կը դիմեն , զիւրաւ կրնան ըմբռնել ապտիկին տարբերութիւնները , յէ գործի մաքրութեան եւ թէ գիններու մասին : 1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԵՐԱՆՈՒՑՈՒՄ

Աղէքսանդրիոյ և Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ . փափաքողները կրնան դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան հասցէին .

Արտոնագրի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ

GRAND BAR ABBAS

ՇԱՐՄ ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆԱԻԿԻՆ ՅԼԱՇԻՆ ՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ

Անցեալ Մայիս 1 ին ձեռի ունեցաւ քաղաքի Կոստ Պառ Ապպասի . որ կոչուած է ըլլալ ընտանեկան հաւաքավայր մը , ճոխ եւ ամենամեծ սպասեանով կանաւորուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԵԱԼ , ԱՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ .

Կը հրաւիրուին Հայ ընտանիքները , յետ այսու իրենց ժամադրաւայրը ընտրել Կոստ Պառ Ապպասը . վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան իրենց ընտանիքի նախապատուութենէն .

Կան Պառ Ապպասը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպիլիները և գարեջուրներուն ամեն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն պիտի տրուի « ԼՕՎԷՆ ՊՐԱԻՆ » տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած եւ համբաւեալ է .

Օ՛ն ուրեմն . փութացէք դէպի Պար Ապպաս .

Ս . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔ